

## Ռոբոտաշինության դասընթացավար /ուսումնական բովանդակություն մշակող

Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը փնտրում է Ռոբոտաշինության մասնագետի, ով կմիանա կրթական բովանդակություն մշակող թիմին, կվարի ռոբոտաշինության դասընթացներ, կմշակի Թումո կենտրոնների ուսանողների համար նախատեսված կրթական բովանդակությունը և նյութը՝ զարգացնելով և կատարելագործելով Թումոյի կրթական ուսումնական պլանը:

### Աշխատանքային գործառույթներ

- Մշակել և վարել ռոբոտաշինության դասընթացներ Թումո ուսանողների համար
- Աշխատել Երևանում, ինչպես նաև գործուղվել այլ Թումո կենտրոններ՝ տարեկան մի քանի անգամ վարելու մեկ ամիս տևողությամբ դասընթացներ
- Զարգացնել ուսանողների հմտությունները՝ մշակելով ինքնուսուցման կրթական ծրագիրը
- Յուրաքանչյուր դասընթացի ավարտին հավաքագրել և գնահատել ուսանողների արդյունքները
- Ստուգել ուսանողների ինքնուսուցման ծրագրի արդյունքները՝ ապահովելով հետադարձ կապ
- Անհրաժեշտության դեպքում իրականացնել այլ առաջադրանքներ

### Անհրաժեշտ որակավորումներ և հմտություններ

- Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում

- Կրթական ոլորտում և պատանիների հետ աշխատանքային փորձի առկայությունը ցանկալի է
- Հաղորդակցման գերազանց հմտություններ
- Ծրագրերի իմացություն. LEGO Mindstorms, Arduino IDE-ն ցանկալի է
- Լեզուների իմացություն. հայերեն՝ անհրաժեշտ, անգլերեն՝ ցանկալի
- Ուսումնասիրություններ կատարելու հմտություն
- ԹՃ անհատապես և թՃ թիմի կազմում աշխատելու ունակություն
- Նախատեսված ժամկետներում առաջադրանքը ավարտին հասցնելու և աշխատանքային բարձր արդյունավետությունը ապահովելու ունակություն

### Դիմելու կարգը՝

Դիմելու համար խնդրում ենք ուղարկել Ձեր ինքնակենսագրականը [jobs@tumo.org](mailto:jobs@tumo.org) էլ. հասցեին: Խնդրում ենք նամակի վերնագրում նշել՝ «Ուսումնասիրության դասընթացավար /ուսումնական բովանդակություն մշակող»: Կապ կհաստատվի միայն նախնական ընտրությունն անցած հավակնորդների հետ: